

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԾԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի՞նդհանուր տեղեկութիւն Լյուրոպայի տէ-
րութիւններուն ծագմանը, մէծութեան, զօ-
րութեան և հարստութեանը վրայ :

ԼյուրոՊԱՑԻՈՑ պատմութեան ըս-
կիզբը անանկ մութ ու խառնակ է
որ ստոյգ բան մը չպիտցուիր իրենց
ծագմանը վրայ . բայց յայտնի է որ
Լյուրոպայի այլ և այլ մասերուն և ժո-
ղովուրդներուն մէջ ամենէն առաջ
ծաղկողը Յոյները եղած են, [թէ քա-
ղաքականութեամբ և թէ ուսմամբ :
] Այս ուսման լոյսը Փիւնիկեցիներէն և
Լյուրոպացոցմէ առին, որոնք Լյուրոյի
ու Լյուրիկէի ամենէն հին ծաղկած
ազգերն էին, ու միջերկրական ծո-
վուն եղերքը նաւարկութիւն կ'ընէին :
Յոյները իմաստութիւնը լուսաւորուած՝
իրենց հայրենիքը դառնալու ատեն-
նին, գաղթականներ հաստատեցին
Լյուրոպայի ու Դաղղիայի մէջ . բայց
աս գաղթականները ինչուան հումա-
մայեցւոց տէրութիւն զօրանալը խեղձ
վիճակի մը մէջ էին : Հումայեցիք,
որ փոքր Լյուրոյէն եկած են, Լյուրոյ
բնիկ և գաղթական ազգերուն տիրե-
լէն ետե, Լյուրոպայի կամ Դաղղիայի-
ներն ու Դարմանացիներն ալ նուա-
ծեցին, Արմատացիներն ու Աքանտի-
նաւներն ալ հալածեցին : Բայց աս
բարբարոս ազգերը՝ ատեն անցնելով
նորէն հումայ վրայ եկան ու հումա-
մայեցւոց տէրութիւնը կործանեցին :
Այսոնց հետեւով ուրիշ բարբարոս
ազգեր ալ արեւելքէն ու հիւսիսէն
վազեցին Լյուրոպայի վրայ ու առջին-
ներուն հաստատած տէրութիւնը կոր-
ծանեցին : Հերուլք ըսուածները կոր-
ծանեցին հումայ տէրութիւնը, որ
Դքեմտեան կայսերութիւնը ալ կ'ըսուէր,
անոնցմէ վերջը զօրացան Անգոբար-
տացիք որ Լյուրոյ մեծ մասին տիրե-

ցին, Վարանք կամ Փրանկ ազգն ալ
Դաղղիա հաստատուեցաւ ու հալա-
ծեց անկէ Ախիկոթները . ասոնք
ալ լ անտալը սուած ազգին հետ միա-
ցած՝ Վաղանիա անցան . նոյն միջոցին
Ապսոնները, Անգողիացիք ու քանի
մը ուրիշ մանր ժողովուրդներ Ծրի-
տանիա և Վաղղիոյ ծովեզերքը եկան :
Այս ազգերը թէպէտ և քիւլոր էին
բուն տեղացի բնակիչներէն, բայց զօ-
րաւոր գտնուելով՝ անոնց սովորու-
թիւններն ու լեզուն փոխեցին, ինչ-
պէս որ կը տեսնենք ասոր օրինակը
նաև փոքր Լյուրոյի բնակչացը վրայ,
որ հիմա գրեթէ ամէնն ալ տաճկե-
րէն կը խօսին : Ոիսայն Լյուրոպայի
մէջտեղուանքի ու հարաւային բնա-
կիչներուն բարբը չկրցան փոխել . ո-
րովհետեւ անոնց մէջ քիչ խառնուրդ
եղեր էր բարբարոսներէն : Այս գրե-
թէ ասոնք են հիմակուան Լյուրոպայի
ծաղկած ազգերուննախածնողքը . քա-
նի մը մանր մունր ժողովուրդներ ալ
կան Լյուրոպայի արեւելեան վարի կող-
մերը, որոնց սկիզբը Լյուրոյէն է . Լյ-
ուրոյէն եկողներուն մէջ գլխաւորն են
Ուուրբերը կամ Տաճկլները :

Լյուրոպայի բաժանումը : — Շատ ան-
գամ մտածեր են աշխարհագիրները
այնպէս բնական կերպով մը բաժնել
Լյուրոպան, որ գէթ քիչ մը վերաբե-
րութիւն ունենայ իրեն քաղաքական
բաժանմանը հետ, այսինքն մէջի տէ-
րութիւններուն հետ . բայց աս բա-
ժանումը չէ յաջողած . անոր համար
ընդհանուր կերպով բոլոր Լյուրոպան
իրեք մաս կը բաժնեն, հիւսիսային,
Այծին ու հարաւային : Պալպի հի-
մակուան մեծ աշխարհագիրն ալ բո-
լոր Լյուրոպան երկու մեծ մաս կը բաժ-
նէ, Դքեմտեան ու Լյուրուելեան . վեր-
ջը արեւմտեանը ուրիշ իրեք մաս ալ
կը բաժնէ, այսինքն հարաւային, մի-
ջին ու հիւսիսային :

Վաղաքական բաժանման կողմա-
նէ Լյուրոպան 92 տէրութիւն կը բաժ-
նուի . ասոնց մէջ են իրեք կայսրու-
թիւն, մէկ ինքնիշխան միապետու-

թիւն, ու մէկ եկեղեցական իշխանութիւն . 17 թագաւորութիւն, 7 մեծ գքսութիւն, 1 կայսրընտրութիւն, 12 պզտի դքսութիւններ . 17 իշխանութիւն . 1 բղեշխութիւն . 1 պետութիւն . ու 31 հասարակապետութիւն .

Եւրոպայի տէրութիւններուն ամենէն գլխաւորները հիմա կը սեպուին Որուսաստան, Խնդղիա, Գաղղիա, Շատրիա, Բրուսիա ու Սպանիա : Ի՞նչ ասոնք ամէն բանի մէջ առաջին կամ հաւասար չեն մէկմէկու . ինչպէս զօրաց շատութեան կողմանէ մէկ տէրութիւն մը Որուսին չկրնար հաւասարիլ . ծովային զօրութեան կողմանէ Խնդղիացւոյն հետ . Գաղղիան վաճառականութեան և երկիրներուն հարստութեանը կողմանէ Խնդղիայէն վերջը երկրորդն է, բայց իրեն ցամաքային ուժը Շատրիային չհամնիր, թէպէտ և ծովային ուժը Շատրիայէն վեր է :

Որուսի տէրութիւնը Եւրոպային կեսէն աւելին իրեն իշխանութեան տակն առած է, ու Եւրոպայի ժողովրդեան գրեթէ չորրորդ մասը իրեն երկրին մէջն է . հիւսիսէն ինչուան հարաւային կողմերը կը տարածուին իր սահմանները, և արևելքէն Շատրիայի արևմտեան մասին հետ կպած է :

Եւրոպայի բնակչութեան : — Եւրոպայի բազմամարդութիւնը, հարստութիւնը, պատերազմական զօրութիւնն ու քաղաքականութեան պատիկութեանը համեմատ՝ աշխարհիս ուրիշ մասերէն աւելի առաջ գնացած է :

Եւրոպայի տարածութիւնը 2,793,000, քառակուսի աշխարհագրական

մղոն է . բնակիչը 230,000,000, և ամէն մէկ քառակուսի մղոնին 82 հոգի բնակիչը կ'իյնայ . բայց օդին ազդեցութիւնը և քաղաքականութեան ծաղկին ալ տարբերութիւն կ'ընեն բնակչաց շատութեանը վրայ : Եւրոպայի հիւսիսային մասին բնակիչքը ամենէն քիչն են՝ ուրիշ մասերուն բնակչացը համեմատելով : Վանի մը տէրութիւններուն բնակիչը իրարու հետ համեմատելով կը տեսնուի որ ծովեղերեայ տէրութիւնները աւելի բազմամարդ են քան թէ ցամաքային տէրութիւնները . այսպէս Խնդղիա ու Ստորին նահանգները Եւրոպայի խիստ բազմամարդ տէրութիւններն են . Գաղղիան աւելի բազմամարդ է քան թէ Շատրիան . նոյնպէս Լափոլին աւելի բազմամարդ է քան թէ Վարտենիան . Հոնիական կղզիները շատ աւելի քան թէ Տաճկաստանը :

Եւրոպայի արևմտեան մասը շատ աւելի ծաղկած է քան թէ արևելեանը . վասն զի արևմտեան մասին բընակիչքը գրեթէ քառապատիկ աւելի են քան թէ արևելեան մասինները : Վրեւելեան մաս ըսելով աւելի կ'իմացուին Վերմանիայէն անդին եղած երկիրները, ինչպէս է Վաճառաւտան, Լեհաստան, Ուրվիա, Ուլահ, Պուղտան, Տաճկաստան, Հունաստան, և Որուսաստանին մէկ մեծ մասը, որոնք խիստ մեծ ու զգալի տարբերութիւն ունին ուսման և ամէն բանի կողմանէ : Հոս դրուած ցուցակը կը ցուցընէ բոլոր Եւրոպայի տէրութեանց երկիրներուն մեծութիւնը և բնակիչքը :

| Տէրութեան սուրսերը | Հիւսիսացիւն Տէրութեան |
|-----------------------|-----------------------|
| Հիւսիսացիւն Տէրութեան | |
| Հունակիւն | 223.000 |
| Հունակիւն | 16.500 |
| Հունակիւն | 33.950 |
| Վրահիւն | 80.450 |
| Վրահիւն | 9.780 |
| Վրահիւն | 8.250 |

| Տէրութեան սուրսերը | Հիւսիսացիւն Տէրութեան |
|--------------------|-----------------------|
| | 4,218,000 |
| | 2,000,000 |
| | 25,226,000 |
| | 14,226,000 |
| | 2,775,000 |
| | 4,242,000 |

| ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ԱՆՈՒԽՆԵՐԸ | ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ | ԲՆԵԿԻՆ |
|-------------------------------------|-------------|------------|
| Պաղպիս . | 154,000 | 33,541,000 |
| Պաւերա . | 22,120 | 4,320,000 |
| Աննովեր . | 4,341 | 1,400,000 |
| Սպասոնիս . | 11,125 | 1,550,000 |
| Վերթեմակէրկ . | 5,720 | 4,948,000 |
| Գերմանիայի 28 նահանգները . | 23,000 | 5,416,000 |
| Գերմանիայի 4 ազատ քաղաքները . | 1322 | 332,000 |
| Զուիցերի . | 11,200 | 2,279,000 |
| Աւստրիա . | 194,500 | 32,168,000 |
| ՀԱՄԱԻԱՅԻՆ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ | | |
| Սպանիա . | 137,000 | 14,660,000 |
| Փորթուգալ . | 29,150 | 3,720,000 |
| Սարաենիա . | 21,000 | 4,680,000 |
| Տէրութիւն Պապին . | 13,000 | 2,850,000 |
| Կաֆոլի . | 31,460 | 8,073,000 |
| Թուքանիա . | 6,344 | 1,380,000 |
| Իտալիոյ 4 պատի իշխանութիւնները . | 3,580 | 996,500 |
| Սուրբ Մարինոսի հասարակապետութիւնը . | 17 | 7,000 |
| ԱՄԵՐԻԵԼԵԱՆ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ | | |
| Եւրոպայի Ռուսաստան . | 1,500,000 | 51,003,000 |
| Լեհաստան . | 36,700 | 4,059,000 |
| Հասարակապետութիւն Քրաքովիայի . | 373 | 135,000 |
| Եւրոպայի Տաճկաստան . | 110,000 | 9,600,000 |
| Սերվիա . | 9,000 | 900,000 |
| Ռուսաստան . | 21,000 | 2,307,000 |
| Պոնիական կղզիները . | 11,600 | 1,400,000 |
| Յունաստան . | 754 | 200,000 |
| | ... | 700,000 |

Ի՞աղմաբրդութեան : — Ինչպէս որ վերը ըսկնք, մեծ ազգեցութիւն կ'ընէ լնակիչներուն չբազմանալուն վրայ օդին գէշութիւնը, հիւանդութիւնները, պատերազմները և ուրիշ ասոնց նման պարագաներ : () դին գէշութեանը և հիւանդութիւններուն հետեանքը յայտնի է ամենուն . անոնց մէ աւելի է պատերազմներուն վնասները, որով երթեմն ոչ միայն մէկ ազգի մը, հապա շատ ազգերու ալ վնաս կ'ըլլայ . աս բանս շատ զգալի եղաւ Ի՞աղջիոյ խռովութեան ժամանակը, որ միայն Ի՞աղջիացւոց ազգէն երկու միլիոն մարդ ջարդուեցաւ կ'ըսեն . ուր թողունք մէկաւ ազգերուն ջարդերը, որ ամէնը մէկտեղ դրեթէ 6 կամ 7 միլիոնի կը հասնի : Ի՞այց հիմա աս պատերազմները դադրած ըլլալով, ընդհանրապէս բոլոր Լյուրոպայի բնակչութեան ծաղկելէն և կառավարութեան կերպէն . ինչպէս կը տեսնուի աս դրած աղիւսակովս ալ .

Օ՞քու : — Լյուրոպացիք երկար ատեն իրարու հետ ըրած պատերազմներով աղէկ իմացան որ ազգի մը յառաջադիմութիւնն ու մեծութիւնը օտար երկիրներու տիրելուն վրայ չէ, հապա արհեստից և վաճառականութեան ծաղկելուն և ժողովրդեան հանգստութեր վրայ հաստատուած է . աս պատճառաւ հիմա առջինին պէս սաստիկ փոյթ չկայ զինուորները շատցընելու . այնպէս որ խաղաղութեան մէջ 92 հոգւոյ մէջէն մէկ հոգի միայն զինուորութեան կ'երթայ . ուրով 2,500,000 կ'ըլլայ բոլոր Լյուրոպայի զօրքը : Ի՞սոնց մէջ ամենէն շատ զօրք ժողովողը հիւսիսային ազգերն են :

Տուրք : — Իրաւ է որ տէրութեան մը հարստութիւնը շատ կը կախուի իրեն առած տուրքերէն, բայց մեծապէս կը տարբերի աս բանս վաճառականութեան ծաղկելէն և կառավարութեան կերպէն . ինչպէս կը տեսնուի աս դրած աղիւսակովս ալ .

| ՏԵՐՈՒԹԵՍՆՑ ԾԱՌԱՆՆԵՐԸ | ՏՐԱՆՔ . | ՀԱՐԻԿՐՈՐԴ . |
|--------------------------------------|-----------|-------------|
| Անդղիա . | 65 . | 20 . |
| Դաղղիա . | 33 . | 31 . |
| Գերմանիայի և հասարակապետութիւնները . | 33 . | 21 . |
| Հոլանտա . | 32 . | ... |
| Պելճիա . | 26 . | ... |
| Տանիմաբքա . | 25 . | 64 . |
| Գերմանական դաշնակցութիւն . | 20 . | 57 . |
| Սպասոնիա . Պաւերա . | 17 . | 20 . |
| Բրուսիա . | 20 . 19 . | 96 . |
| Անովվեր . Վիրթեմպէրէ . | 16 . 15 . | 77 . 63 . |
| Փորթուգալ . | 15 . | 32 . |
| Սարտենիա . | 15 . | 10 . |
| Թուքանա . Լուքքա . | 13 . | 33 . |
| Հռոմ, Սիկիլիա . | 11 . | 58 . 32 . |
| Մոնաքոյ . | 11 . | ... |
| Աւստրիա . | 10 . | 70 . |
| Ըռեւտ . | 10 . | 86 . |
| Օսմ. տէրութիւն . | 10 . | ... |
| Փարմա, Մոտենա . | 10 . | ... |
| Սպանիա . | 7 . | 76 . |
| Ռուսաստան . | 6 . | 20 . |
| Զուիցերի . | 5 . | 99 . |

Իս ցուցակով կը տեսնուի որ Եւրոպայի միջին տէրութիւնները, այսինքն Անգղիան, Գրաղղիան, Ատորին նահանգները, և արևմտեան Պաերմա-

նիան աւելի ծաղկած են վաճառականութեամբ, քան թէ հիւսիսային և հարաւային մասերը, որոնց տուրքը քիչ է :

Հ. Հ. Թ.

Պատշաճէ :

ԽՍՈՐԴՈՑ երկրին հին ատենը ինչ աստիճանի ծաղկած ըլլալը՝ հիմա միայն իր մեծամեծ քաղաքներուն աւերակներէն կ'իմացուի . ինչպէս տեսանք նաև Պալմիրայի աւերակներուն ստորագրութեանը մէջ¹ : Այսպիսի քաղաքներուն մէկն ալ է Պատշաճէք ըսուածը, որ հին ատենի հեղիւուպօլիսն է, ու հայերէն Խմէդ հաղաք ալ կ'ըսուի² :

Յունաց ու հռովմայեցւոց հին պատմիչներէն խիստ քիչ տեղեկութիւն ունինք աս քաղաքիս վրայ . և

1 Տես Հատ . գ . Երես 201 .

2 Վասն զի հերիուուլիս բառը յունարէն արեգակնայի տաղաւոր կը նշանակէ : Գիտնալու է որ աս անունով իրեք քաղաք կար հին ատենը . մէկը ասիկայ, որ հեղիւուպօլիս Ասորւոց կ'ըսուէր . երկրորդը Եգիպտոս՝ Գահիրէի արևելեան կողմը . երրորդը Կիֆիայի մէջ :

զարմանալին աս է որ թէպէտ Պատշաճէքին աւերակներէն յայտնի կը տեսնուի անոր շատ երևելի քաղաք եղած ըլլալը, և սակայն երկուհարիւր տարի հազիւ կայ որ Եւրոպացիք Ճանչցեր են աս քաղաքը : Ա ասն զի քանի մը անգղիացի վաճառականներ Խարբացւոցմէ լսելով թէ մեծ քաղաք մը կայ անապատին մէջ որ Աղօմնն իմաստունը շիներ է կ'ըսեն՝ Ապայի դշնոյին համար, գնացեր են տեսնելու . անով ուրիշ Ճամբորդներ ալ սկսեր են երթալ տեսնել ու ստորագրել : Հոս դրուած պատկերը՝ Պատշաճէքին հարաւային կողմի տեսքն է . պատկերին ձախ կողմը երեցած մեծ շէնքը արեգական տաճարն է . անոր քովի շինուածքը անկէ պղտիկ, բայց աւելի լաւ պահուած է : Հիմակուան քաղաքին բնակիչները քիչւոր են, ու մեծ մասը Խիւթէվէլլի ըսուած կատաղի Խարբացիքն են :